

ք. Երևան

30-ը հունիսի, 2011թ.

Yerevan

June 30, 2011

2011թ. հունիսի 30-ին, ժամը 18:00-ին «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վ. Սարգսյանի փողոց, 26/1 հասցեում տեղի ունեցավ «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (հետագայում՝ Ընդհանուր ժողով): Ժողովին մասնակցել են ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերեր.

- «Ըղվանոյ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷԼԷԼ-ՍԻ՝ 15390 ձայնի իրավունքով, ի դեմս Ջուան Պարլո Գեչիդջյանի,
- Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ 810 ձայնի իրավունքով, ի դեմս Արսեն Գամաղելյանի (Տեր Հովել քահանա):

Ժողովի մասին ծանուցված էին.

- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահն ու անդամները,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենը,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի տեղակալ - Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահը,

The General Annual Meeting of “Converse Bank” Closed Joint-Stock Company (hereinafter “the General Meeting”) was held on June 30, 2011 at 18:00 at “Converse Bank” Closed Joint-Stock Company: 26/1 Vazgen Sargsyan Street, Republic Square, Yerevan, RA. The meeting was attended by the following shareholders having the right to participate in General Meeting:

- “Advanced Global Investments” LLC, represented by Mr. Juan Pablo Gechidjian with the right of **15390** votes.
- The Armenian Saint Apostolic Church, represented by Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest) with the right of **810** votes.

About Meeting the meeting were notified:

- the RA Central Bank,
- The Manager of the entity conducting external audit of the Bank for the reporting year,
- “Converse Bank” CJSC Board Chairman and Members,
- Head and members of “Converse Bank” CJSC Internal Audit

- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ներքին ատոլիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները,
- ՀՀ Կենտրոնական Բանկը,
- Բանկի՝ հաշվետու տարվա արտաքին ատոլիտ իրականացնող անձի ղեկավարը,

Department,

- "Converse Bank" CJSC Executive Director,
- "Converse Bank" CJSC Deputy Executive Director – Head of Accounting Department - Chief Accountant.

որոնցից Ժողովի նիստին ներկա էին՝

Of the above mentioned, the following attended the Meeting:

- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանը,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամներ Ջուան Պարլո Գեչիդջյանը և Արսեն Գամաղեյանը (Տեր Հովել քահանա)
- Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն Տ. Գավթյանը,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի տեղակալ- Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ Ա.Կարախանյանը,
- «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ներքին ատոլիտի ստորաբաժանման ղեկավար Լ.Յորդանյանը,
- ՀՀ ԿԲ լիազոր ներկայացուցիչ Գավթի Գալստյանը,
- Բանկի՝ հաշվետու տարվա արտաքին ատոլիտ իրականացնող անձ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Արմեն

- Davit Galstyan - authorized representatives of the RA CB,
- Armen Hovhannisyan, representative of "Grant Thornton Amyot" CJSC, Independent Auditor of the Bank for the reporting year,
- Armen Ter-Tachatyan, Board Chairman of "Converse Bank" CJSC,
- "Converse Bank" CJSC Board Members Juan Pablo Gechidjian and Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest),
- L.Yordanyan, Head of Internal Audit Department of "Converse Bank" CJSC,
- T. Davtyan, "Converse Bank" CJSC Executive Director,
- A. Karakhanyan, Deputy Executive Director - Head of Accounting Department – Chief Accountant of

ՔԱՂՎԱԾՔ
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎԻ №1
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ



EXTRACT FROM
“CONVERSE BANK”
CJSC GENERAL
ANNUAL MEETING
MINUTES №1

Հովհաննիսյանը,

Converse Bank CJSC.

Հաշվի առնելով, որ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ տեղաբաշխված քվեարկող հասարակ (սովորական) բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 16200 ձայն, իսկ Ընդհանուր ժողովին մասնակցող բաժնետերերին պատկանող ձայների գումարը հավասար է 16200 ձայնի՝ հետևաբար «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 77 հոդվածի համաձայն Ընդհանուր ժողովը համարվեց իրավասու և հայտարարվեց բացված:

Ընդհանուր ժողովը նախագահում էր Արմեն Տեր-Տաճատյանը, իսկ ժողովի քարտուղարն էր «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Աշխատակազմի ղեկավար Լիլիթ Սարգսյանը:

Whereas the total number of votes of placed common voting shares of “Converse Bank” Closed Joint-Stock Company is 16200 and the total number of the votes owned by the General Meeting participants is 16200, therefore pursuant to Article 77 of the RA Law “On Joint-Stock Companies” the General Meeting was considered competent and was declared open.

Mr. Armen Ter-Tachatyan presided at the General Meeting and Ms. Lilit Sargsyan, Head of “Converse Bank” CJSC Administrative Staff, was the Secretary of the Meeting.

ՕՐԱԿԱՐԳ

2. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2010 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթների և կրած վնասների բաշխման մասին: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

AGENDA

2. On the allocation of profits and losses incurred and caused by financial and economic activity of “Converse Bank” Closed Joint-Stock Company throughout 2010. On payment of annual dividends.

2-ԲԴ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ON ISSUE 2

Ջեկուցեց՝ Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի տեղակալ-Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ Ա.Կարախանյանը «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2010 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների մասին: Պարոն Կարախանյանը նշեց, որ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների 2010թ. Բանկի զուտ շահույթը կազմել է 1,432 մլն. ՀՀ դրամ, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում արձանագրվել էր 1,026 մլն ՀՀ դրամի վնաս: Ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի բանկի 2010թ. չբաշխված զուտ շահույթը կազմել է 336.6 մլն. ՀՀ դրամ: Ելույթ ունեցողը առաջարկեց նշված գումարի հաշվին համալրել Բանկի պահուստային հիմնադրամը՝ Բանկի կանոնադրությամբ սահմանված 20%-ի չափով, վճարել տարեկան շահութաբաժիններ բաժնետերերին, իսկ մնացած գումարն ուղղել եկամուտների պահուստին:

Ելույթ ունեցավ «Ընդվանդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷԼԷԼՍԻ տնօրեն Ջուան Պարո Գեչիդջյանը և առաջարկեց հիմք ընդունելով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի ներկայիս ֆինանսական կայուն վիճակը, ինչպես նաև

Heard the report of A. Karakhanyan, Deputy Executive Director–Head of Accounting Department- Chief Accountant spoke on the results of financial-economic activity of “Converse Bank” CJSC for year 2010. Mr. Karakhanyan mentioned that in accordance with international standards of financial statements the net gain of the bank for 2010 comprised AMD1,432 million, at that in the same period of the previous year was reported a loss in the amount of AMD1,026 million. Pursuant to the procedure established by the RA Legislation, the retained earnings of the bank for 2010 comprised AMD336.6 million of net income. The speaker offered to replenish the bank’s reserve fund in the amount of 20% pursuant to the Bank’s Charter, pay annual dividends to the shareholders, and send the rest of the money to the income reserve.

Spoke Juan Pablo Gechidjian, Director of “Advanced Global Investments” LLC and offered to assume as basis the current steady position of “Converse Bank” CJSC as well as, taking into

ՔԱՂՎԱԾՔ
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎԻ №1
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ



EXTRACT FROM
“CONVERSE BANK”
CJSC GENERAL
ANNUAL MEETING
MINUTES №1

հաշվի առնելով Բանկի համար սահմանված առաջիկա տարիների երկարաժամկետ հեռանկարային ծրագրերը և կարևորելով Բանկի գործունեության համար բաժնետերերի կողմից կատարվող ներդրումները, 2010թ. Բանկի 336.6 մլն. ՀՀ դրամ զուտ շահույթի մի մասը՝ զուտ շահույթի 20%-ի կամ 67321595.0 հազ. ՀՀ դրամ գումարի չափով, ուղղել պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ 165 706 600 ՀՀ դրամ գումարը, որպես տարեկան շահութաբաժիններ, վճարել բաժնետերերին, որից 165 700 000.0 ՀՀ դրամը՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, իսկ մնացած մասն ուղղել եկամուտների պահուստին:

Ելույթ ունեցավ Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու լիազոր անձ Արսեն Գամաղեյանը (Տեր Հովել քահանա) և հայտնեց իր համաձայնությունը Ջուան Պաբլո Գեչիդջյանի՝ բաժնետերերին շահութաբաժիններ վճարելու առաջարկի հետ:

Ելույթ ունեցավ Արմեն Տեր-Տաճատյանը և տեղեկացրեց, որ Բանկը որպես հարկային գործակալ ոչ ռեզիդենտ հանդիսացող «Ընդվանդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷԼԷԼՍԻ-ին վճարվող շահութաբաժնի 10%-ի չափով պետք է հաշվարկի և վճարի հարկ:

consideration the long-term prospect program specified for the bank for the coming years and stressing up the importance of investments made by the shareholders for the Bank's activity and send a part of the Bank's net gain which comprised AMD336.6 million, 20% or AMD 67321595.0, to replenishment of the reserve fund and pay the sum in the amount of AMD165 706 600 to shareholders as annual dividends – AMD 165 700 000.0 against ordinary shares and the rest of the money direct to replenishment of the income reserve.

Spoke the Armenian Saint Apostolic Church Representative in the face of Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest) and voiced his consent with Juan Bablo Gechidjian's offer to pay dividends to shareholders.

Armen Ter-Tachatyan spoke and informed that as a fiscal agent the Bank must calculate and pay tax in the amount of 10% of the dividend paid to non-resident “Advanced Global Investment” LLC.

Որոշեցին՝

Resolved:

1. «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2010 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթի 20% կամ 67321595.0 ՀՀ դրամ գումարն ուղղել պահուստային հիմնադրամի համալրմանը, 165 706 600.0 ՀՀ դրամ գումարը որպես շահութաբաժին բաշխել բաժնետերերի միջև, որից 165 700 000.0 ՀՀ դրամը՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, իսկ մնացած մասն ուղղել եկամուտների պահուստին:
2. Հաստատել «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2010թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթից բաժնետերերի միջև շահաբաժինների բաշխման մասին ցուցակը:
3. Շահութաբաժինների վճարումը արտոնյալ բաժնետոմսերի դիմաց կատարել մինչև 30.08.2011թ., իսկ սովորական բաժնետոմսերի դիմաց՝ մինչև 30.09.2011թ.
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:
1. Send 20% or sum in the amount of AMD67321595.0 of the net gain of “Converse bank” CJSC as a result of financial-economic activity of “Converse Bank” CJSC for 2010 to replenishment of reserve fund, distribute the sum in the amount of AMD165 706 600.0 as a dividend among the shareholders, of which AMD165 700 000.0 - against ordinary shares and the rest of money direct to replenishment of the income reserve.
2. Approve the list on distribution of dividends of the net gain made as a result of financial-economic activity of “Converse bank” CJSC for 2010.
3. Payment of dividends against preference share is to be made up to 30.08.2011 and that against ordinary shares is to be made till 30.09.2011.
4. This resolution takes effect from the moment of approval.

ՔԱՂՎԱԾՔ
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎԻ №1
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ



EXTRACT FROM
“CONVERSE BANK”
CJSC GENERAL
ANNUAL MEETING
MINUTES №1

Կողմ՝ 12331 ձայն
Դեմ՝ 0 ձայն
Չեռնպահ՝ 0 ձայն



For: 12331 votes
Against: 0 votes
Abstained: 0 votes

ՔԱՂՎԱԾՔՆ ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ԴԻՇՏ Է
EXTRACT IS TRUE TO THE ORIGINAL

ԳՈՐԾԱԳԻՐ ՏՆՕՐԵՆ՝
ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

EXECUTIVE DIRECTOR
TIGRAN DAVTYAN





| | | |
|--|--|---|
|  <p>CONVERSE BANK</p> | <p>«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ</p> | <p>Հավելված</p> <p>Հաստատված է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողովի 30.06.2011թ. N1 արձանագրությանը Նախագահ</p>  <p>Ա.Տեյր-Տաճատյան</p> |
|--|--|---|

Ց ՈՒ Ց Ա Կ

«Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության
2011 թվականի ֆինանսատնտեսական գործունեության
արդյունքում բաժնետերերի միջև շահաբաժինների բաշխման մասին

| Ազգանուն, անուն | Կանոնադրական կապիտալում ներդրված գումար | Տարվա ընթացքում կանոնադրական կապիտալում ներդրված միջին կշռված գումար | Բաժնետոմսերի տեսակները | Վճարվելիք շահաբաժին |
|--|---|--|---------------------------|------------------------|
| Advanced Global Investments LLC | 4 617 000 000 33 300 | 4 617 000 000 33 300 | Սովորական Արտոնյալ | 157 415 000 6 600 |
| Մայր Աբոո Սուրբ Էջմիածին | 243 000 000 | 243 000 000 | Սովորական | 8 285 000 |
| Ընդամենը | 4 860 033 300 | 4 860 033 300 | | 165 706 600 |

| | | |
|--|---|--|
|  CONVERSE BANK | <p style="text-align: center;"><i>THE GENERAL ANNUAL MEETING OF CONVERSE BANK CLOSED JOINT-STOCK COMPANY SHAREHOLDERS</i></p> | <p style="text-align: right;"><u>Appendix</u> <u>Approved by the minutes N 1 of</u> <u>the Annual General Meeting of</u> <u>Shareholders of "Converse Bank"</u> <u>CJSC as of 30.06.2011</u> <u>Chairman</u></p>  A. Ter-Tachatyan |
|--|---|--|

LIST

On distribution of dividends received as a result of the financial-economic activity of
"Converse Bank" Closed Joint-Stock Company throughout 2011 among the shareholders

| Name | Equity participation | Average weighted annual equity participation | Share type | Dividends to be paid |
|---------------------------------|-------------------------|--|-----------------------|----------------------|
| Advanced Global Investments LLC | 4 617 000 000 33 300 | 4 617 000 000 33 300 | Ordinary Preferred | 157 415 000 6 600 |
| Mother See of Holy Etchmiadzin | 243 000 000 | 243 000 000 | Ordinary | 8 285 000 |
| Total | 4 860 033 300 | 4 860 033 300 | | 165 706 600 |